

ՊԱՅՄԱՆ

ՊՈՒԼԱՐԱ

Տարեկան 12 Լ. 5. 02

Վեցամսեայ 7 Լ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւ մէկ ծաւրով

Տարեկան 14 Ժր.

Վեցամսեայ 7 Լ.

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2,60 Ժոր

Վեցամսեայ 1,50 Լ.

ԿԱՆ ԽԻԿ

Ծանոցման տողը

20 սանդիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆԱ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅԵ

Rédaction du journal

„Ipravounk“

ВАРНА (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иправункъ“

ВАРНА (Bulgarie)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒԴՍՐԱՔ

Թագադրութիւն Ալֆոնս Ժ.Ի

Այս օրերս Սպանիացիք իրենց պատանի թագաւորին թագադրութեան հանդէսին պատրաստութեամբ զբաղած են. Մատրիտի մէջ ոգեւորութիւնը խիստ մեծ է. օտար պետութեանց պատուիրակները արգէն հասած են:

Շուրջ 17 տարիներ առաջ Սպանիոյ Ալֆոնս Ժ.Ի. երիտասարդ թագաւորը զինք տառապիցնող հիւժախտէն երբ ընկճուեցաւ. կինը, Գրիսթինա թագուհին, քանի մը ամսուան յիշ ըլլալով, ինք տանձնեց ապագայ վեհապետին խնամակալութիւնը ու արքայական հոգեբը. բարեբաղդաբար 5-6 ամիս յետոյ մանչ զաւակ մը ունեցաւ, յանձին արդի Ալֆոնս պատանի թագաւորին, որ իր ծնած օրէն «Վեհապետ արքայ» տիտղոսով ծնաւ: Այսօր 16 տարեկան այդ պատանին է որ, ըստ երկրին օրէնքին, չափահաս կը հռչակուի և վեհապետական իրաւունքը ուղղակի ինք կը ստանձնէ, ու իր խանութակած մայրը խնամակալութեան բռնէն կազատէ:

Գրիսթինա թագուհին իր ամուսնոյն դառն կորուստէն ի վեր սգաւորութեան կսկիծին հետ ընդարձակ թագաւորութեան մը բազմակնճիւ հոգերն ալ իր վրայ առած, կրցաւ վերջապէս 17 տարուան երկար ժամանակամիջոցին մէջ արտաքին ու ներքին թշնամիներու դէմ պահպանել գահը ու թագը, և այսօր ալ անշուշտ սրտի մեծագոյն գոհունակութեամբ, այդ նուիրական աւանդները հանդիսաւորապէս կը յանձնէ իր օրինաւոր տիրոջ, իր հարազատ զաւակին:

Գրիսթինա թագուհին իր խնամակալութեան ձիգ ժամանակամիջոցին մէջ թէեւ եղական կորով, իմաստութիւն և հաստատմունք թիւն ցոյց տուաւ, բայց Սպանիոյ պատմութիւնը այդ չըջանի համար տխուր էջեր միայն արձանագրեց: Արդի պատանի թագաւորին հօրը Ալֆոնս Ժ.Ի. գահա-

կալութեան օրերուն Սպանիան գաղթային սեփականութեանց տեսակետով էն հարուստն էր. բայց այժմ իր գաղթավայրերը բոլորովին կորուսած, գրեթէ միմիայն մայր երկրին, Սպանիոյ, բնական սահմաններուն մէջ ամփոփուած պետութեան մը թագն է որ դեռատի թագաւորին Ալֆոնս Ժ.Ի. անփորձ ճակատը պիտի զարդարէ վաղը:

Քուպարի և Ֆիլիպեան կղզիներուն մէջ, Սպանիացւոց ի գործ դրած բռնութեանց հետեւանօք, ծագած յարաճուն ապստամբութիւնները Սպանիոյ գանձը դատարկեցին և բիւրաւոր քաղքու մահուան պատճառ եղան, Սպանո-Ամերիկեան դժբաղդ պատերազմի ալ Սպանիան իր գաղթային սեփականութիւններէն ու նաւատորմիէն զրկելէ զատ, զանի նիւթական ու բարոյական անփոխարինելի անկումի մը ենթարկեց: Փափաքելի է որ այս պարագան դաս մը ըլլայ ուրիշ պետութեանց ալ:

Հաշտութեան բանակցութիւնը

Պօէր պետերուն Բրէզօրիաէ մեկնելէն ի վեր քսան օր անցաւ. անոնք խաղաղութեան վերջնական պայմաններուն վրայ խորհրդակցելու համար, բոլոր պօէր հրամանաւորներուն կարծիքը առնել հարկ անհրաժեշտ համարեցին. կէս պաշտօնական հեռագրերն ի մացուցած են թէ վեհապետին կից պօէրական ընդհանուր ժողովը ոչ թէ Անգլիացւոց առաջարկած պայմաններուն վրայ պիտի խորհրդակցէ, ինչպէս կը տարածայնեն անգլիական թերթերը, այլ «հոն նոյնինքն Պօէրները իրենց համար ընդունելի պայմաններ պիտի մշակեն ու Օրանժի և Թրանսվալի սահմաններէն ստրաւադրութիւններուն համեմատ, համախմբուած բոլոր հրամանատարներուն քուէին ենթարկեն»: Այս կէս պաշտօնական լուրը որ հաւաստի աղբիւրէ բխած և եւրոպական էն կարեւոր թերթերու խմբագրականներուն նիւթ եղած է, ցոյց կուտայ

թէ Պօէրները սքանչելի պատերազմիկներ, անձնագոհ հայրենասէրներ ըլլալէ զատ, իրենց մայրաքաղաքներուն և կառավարական կարգ ու սարքերուն թշնամիէն զրաւուելէն ու աւրջուկուելէն վերջն ալ, գիտեն իրենց սահմանադրութեան տրամադրութիւնները կէտ առ կէտ յարգել և օրինակելի օրինապահութեամբ մը, զինուորական ու քաղաքական բոլոր ներկայացուցիչներուն ազատ կարծիքին ենթարկել ալ վճիռները որ ազգին ու հայրենիքին բաղդը կորոշեն: Երկը տարիներէ ի վեր պատերազմի դաշտին վրայ երեսան եկած Պօէրներու եզակի դիւցազնութեանը չափ ծափահարելի է խաղաղութեան բանակցութեան առթիւ անոնց ցոյց տուած այս օրինապահութիւնը և ներկայ խոհական ընթացքը:

Իսկ խաղաղութեան պայմաններուն վրայ այլեւայլ աղբիւրներէ բխած լուրերու և կանխահաս կարծիքներու ո՛ր աստիճան ճշմարտութեան մօտ լինելը և բուն պայմաններուն ինչ ըլլալը հասկնալու համար պէտք է պատկերացնենք Պօէր պատերազմիկներուն Բրէզօրիա վերադարձին, որ չը պիտի ուշանայ: Միայն առ այժմ սա որոշ է թէ անգլիական թերթերու և կէս պաշտօնական ճառերու մէջ շատ անգամ կրկնուած «առանց պայմանի խաղաղութիւն և հնալան դուրս» խօսքը ուղեցիկ բացառանքներուն մը ըլլալէ անդին չէ անցած. որովհետեւ այսօր Պօէրները դեռ զէնքը ձեռքերին խորխոր կերպով և որոշ պայմաններու վրայ է որ խաղաղութեան բանակցութիւնը կը կատարեն:

Ապստամբութիւնը Չինաստանի մէջ

Օտար պետութեանց բանակները հազիւ քաջութեամբ «Երկնային կայսրութեան» և Ռուսները դեռ Մանչուրիայէ չը հեռացած, Չինաստանի հարաւային նահանգները կրկին ապստամբութեան թատերադրութիւնը են:

Հեռագիրը հաղորդեց, թէ տեղացի քրիստոնեաներուն փեսաները հատուցանելու համար որոշուած տու-

գանքը ժողովուրդը վճարել չուզեւ. լով, ապստամբած է կառավարութեան դէմ: Չինական կանոնաւոր բանակը պարտութիւն կրեց ապստամբներէն. վերջին անգամ ալ Չինկ-Թինկֆուի բնակիչները 60 զինուոր սպանեցին. Ապստամբները զօրավար Սուի բանակին յաղթելով մեծամեծ քաղաքներ գրաւեցին. իսկ անցեալ ամսու մէջ մէկ անգամէն 20,000 զինուորաց ապստամբներու կողմը անցնելը իրապէս տագնապեցուց Բէյքինի թէ՛ արքունիքը և թէ՛ դեսպանատները. այս լուրին յաջորդեցին զաղիացի և ուրիշ ազգէ միսօնարներու սպանումը, հրկիզումներ և այլն:

Դեսպանները չինական կառավարութեան կը պահանջեն որ անմիջապէս ապստամբութիւնը զսպէ. Բայց խնդիրը հոն է թէ նա կարող և այդ ընելու: Յարդ ՂԵՐԿուսժ բանակները աւելի յաղթուեցան քան թէ յաղթեցին. իսկ զինուորներու խումբ խումբ ապստամբներու կողմը անցնելը ցոյց կուտայ թէ ցորչափ Չինաստանի սրբի զինուորական աննախանձելի դրութիւնը շարունակուի, կեդրոնական կառավարութիւնը պէտք եղած ազդեցութիւնը չպիտի ունենայ իր գոհնիկ և օտարաւաց հպատակներուն վրայ. հետեւաբար թէ՛ բնիկ և թէ՛ օտար քրիստոնեաներուն կեանքը ու ինչքը վտանգէ զերծ չէ այժմ. Եւ թերեւս մօտ է այն օրը որ Չինաստանի եւրոպական նոր արշաւանք մըն ալ տեսնէ, այս անգամ խաղաղութիւնները հանդարտեցնելու և ապստամբները զսպելու պատրուակին տակ: Բայց այս անգամ, ինչպէս կերեւայ, կայսրը ու կայսրուհին անկեղծ փափաքող են օտարականներու անդորրութիւն տրուելուն. ուստի կեդրոնական կառավարութեան կամքին հակառակ գործուած այդ անկարգութիւնները, շատ շատ, երկրին առ ժամանակեայ ու մասնական գրաւումին միայն պատճառ կրնան ըլլալ, ոչ ամբողջական ու վերջնական բաժանման:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏ

## Ո՞րն է ձշմարիտ կինը

Այն ամեն միջոցները, որոնք մարդկային սեռը ազնուացնելու եւ զարգացնելու կը ձգտին, եռանդաւոր ջատագովութեան արժանի են:

Հին աշխարհի կինը զոգցես իր կոչումը աւելի բարձր ըմբռնած էր, քան նոր սերունդը. առաջինը, իր անձը ամուսնոյն նուիրած էր, եւ այս էր իր բացարձակ կոչումը:

Իմաստուն եւ բարոյական տէր կինը իր հաճոյքը իրեննէրուն (առն եւ որդոց) անձնուիրութեան մէջ կը գտնայ:

Կինը տկար էակ ըմբռնողները շատ կը սխալին. ճշմարտն է ըսել թէ անժամկետ էակ մըն է. բայց անիկա ստեղծուած է բարձր կոչումի մը համար եւ բարձր գործեր կատարելու: Բարոյական տիպար կիններէն զփաղդութիւնը, ցաւը, մահը խոյս տուած են ուսերնին թոթուելով. վասնզի բարոյական կինը իր կոչումն ըմբռնելով միայն անոր անձնատուր կրկնէ: Բարի կինը ծագեալ հրեշտակ մըն է, որ աշխարհի վրայ սէր կը սփռէ, ճշմարտ կնոջ մը քաղցր բնութիւնը, բնական գեղեցկութենէ աւելի համակրելի եւ հաճելի է. իր բարձր պաշտօնին անգիտակ կինը որքան ալ գեղեցիկ ըլլայ անոր հորիզոնը անպատշաճ է. քանզի, քանի իր գեղեցկութիւնը թաղածի, այդ մարդուն սէրն ալ համեմատաբար կը նուազի. բայց ճշմարիտ կինը սիրոյ առարկայ կը դառնայ. առաջինին գիրքը աւազի վրայ է, բայց երկրորդին հիմը ամուր վէմի վրայ հաստատուած:

Ստուար թիւ մը կը կազմեն այն ազէտ բայց գեղեցիկ կինները, որոնք ժամանակին իրենց գեղեցկութեամբ պաշտումի եւ հիացումի առարկաներ դարձած էին եւ խորիմտ նայածք մը ունէին իրենց ստորագրասեւեռներուն վրայ, բայց այժմ անոնք լքուած, անտեսուած, խուցերու անկիւնները քաշուած կապրին ամենաղաւթն յիշատակներով:

## Սէր եւ հաճոյք

Ասոնք իրարմէ անհուն տաքերութիւն ունին. իմաստուն օրիորդը այն է որ սէր կը ներշնչէ եւ սիրոյ առարկայ կը գտնայ:

Ճշմարիտ սէրը չ'ունի. երջանիկ է

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (14)

## ԹԻԱՊԱՐՏԸ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՎԱՆԱԿԱՆ ԲԱՆՏԻՆ ՄԷՁ

Վանական հողէ ճրագը ձեռքին մէջ բռնեց, ինչ Մէլիքին մօտեցաւ. աւուր ոտքերուն զարնուած շղթաները քննեց խորին ուշադրութեամբ մը եւ գլխէն այդ բարի մարդուն ամբողջ թշուառութիւնը: Յետոյ բանալի մը հանեց ծոցէն, անուրի ծակը գտաւ եւ զայն անոր մէջ մտցուց ամենայն զիւրութեամբ: Մէկ զարձուածքով անուրի ոգակը բացուեցաւ... Ռէս Մէլիքին երկու ոտքերը հիմակ ազատ էին կաշկանդուումից: Վանական, առանց սպասելու ձայն տուաւ Ռէս

այն երիտասարդը որ այդպիսի մը բազուկներուն մէջ ապրի: Այն գեղանի բայց տգէտ օրիորդները, որոնք հաճոյքի գիրկը ինկան, թէպէտ ժամանակ մը ինքզինքնին աստուածացած կարծեցին, բայց ժամանակը որ գաղտնիքներու բանալին է, օրին մէկը ցոյց տուաւ թէ՛ անոնք ոչ թէ աստուածացած, այլ ստորնացած էին. եւ այս գիտակցութիւնը գիրենք աշխարհի առջեւ նկուէ ըրաւ:

Բարոյական կինը սրտին մէջ լոյս եւ շրթունքին վրայ երգ ունի, աւսոնք հուժկու պայքարողներու կը նմանին, որոնք յաղթական երգեր կերպեն:

Բարոյական աշխարհի մէջ ճշմարիտ կինը իրական զինուոր մըն է, որ այդ մարդուն սրտին տիրած է. իրաւամբ չկայ ոչ մի բան այսքան անառիկ, որքան սիրտը. իմաստուն մը ըսաւ. «Սրտի տիրողը ամուր քաղաք մը գրաւողէն աւելի զօրաւոր է»:

Կինի կամ, որոնք գիտութիւն, երկպառակութիւն, չարախօսութիւն եւ ատելութիւն կը սնուցանեն, աւսոնք իրենց կոչումին դաւաճանողներ են: Մինչդեռ ճշմարիտ կինը իր լեզուն կը մեղմացնէ, իր թաքուն ուժերը մաքուր կը պահէ, տնական պէտքերը կը կատարէ միշտ զուարթ եւ երգելով. իր գաւազներուն սէր, ակնածանք, եւ վիճ գաղափարներ կը ներշնչէ. անոնց առողջութեանը վրայ արթուն կը հսկէ. մէկ խօսքով, ճշմարիտ կինը նմանցուր գեղձանիկի մը, որ իր տուն անուն վանդակին մէջ պարփակուած վեր վար կը թռչտի:

Ճշմարիտ կինը այդ մարդուն հանգիստ գոյութեանը սէր եւ մեծարանք կը տածէ մշտ: Այլը կնոջ փառքի պատկէ. սակայն կինը առն սիրտն է. ճշմարիտ կինը թաքուն կարողութիւններ ունի, զորս տխուր օրերու մէջ երեւան կը հանէ, ինչպէս գիշերի խաւարը երկինքի լուսաւորները: Պարծանքով պէտք է յիշատակել այն կինները, որոնք մեծ աղետներէ ազատած են իրենց այրերը. բայց կը քաշուին յիշելու այն կանանց անունները, որոնք մէյնէկ աղէտ դարձած են: Հաճելի է գեղեցիկ, դանաւական, պարող, պտուղներէ զուարճացող կին մը ունենալ. բայց ինչ աստիճան երանութիւն է ճշմարիտ բարոյական տէր կին մը ունենալ. առաջինին համար կարելի է ըսել հաճոյք մըն է, բայց վերջինը գանձ մըն է, զոր գտնողը երջանիկ է:

Յոր. Թարգմ. Կ. Հ.

## ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԷՇ, 22 Ապրիլ

Ամսոյս 20ին չարաւի գիշեր, «Թատրոն Պիւլիւմարտ»ի մէջ կարեւոր ուսմէն դերասանական խմբի մը կողմանէ, առեւանդներէ լեզուաւ (°) ի նպատակ տեղւոյս Հայկական Ընթերցարանին ներկայացում մը տրուեցաւ:

Չեմ ուզեր հոս, ոչ խաղին եւ ոչ դերասանական խմբին թերի կողմերը քննադատել. որովհետեւ, ինչպէս որ ըսինք, ոչ խաղը հայերէն լեզուաւ էր, եւ ոչ ալ դերասանական խումբը հայ:

Միայն սաշաւիք բաժնի ներկայացումը շատ մեծ գոհացում պատճառեց այն աւելն հանգիստ տեսներուն, որոնք գիրայօժար փութացեր էին գնալ մտից տոմսեր, մասնախումբի անդամներէն, տալով իրենց դրամը գինեւանդներու եւսլինի մէջ վայելած հաճոյքներէն աւելի բարձր եւ բարոյացուցիչ գրաստիքի մը համար:

Անշուշտ բաւական յոգնութիւն կրեցին յարգելի վարչութեան եւ մասնախմբի անդամները, նոյնապէս կարգադրելով ամեն ինչ հանգիստեաներու հանգստութեան համար: Գրեթէ զաղթականութեան մեծամասնութիւնը, իր ներկայութեամբ կը փայլէր սոյն ներկայացումն ու մինչեւ իսկ ներկայ եղող Ռուսները այդ հոծ բազմութիւնը տեսնելով, կրէին իրարու թէ՛ «տես Ռուսները ի՞նչպէս գիտեն իրենց հանրային հաստատութիւններու նպատակը կիր պերը, յիշատի արժանի է այս ազգը ազատութիւն ստանալու»:

Կրտսէ թէ՛ Ընթերցարանի կրթական հաստի մը ունեցած է սոյն ներկայացումէն. անշուշտ այս առիթով Ընթերցարանի գրադարանը նոր գրքերով պիտի օժտուի:

(°) Ի չգոյէ հայ խումբի:

Վաքին մէջ մտաւ ու Ռէս Մէլիքին ձեռքը բռնած մինչեւ այն խախտել պատին քով առաջնորդեց, ուսկից անցած էր ներսը: Հոն, այդ զարնութիւն պատին մէջ ճեղքուած բացուած էր, ուսկից մարդու մը մարմինը հազիւ գուրս կրնար ելնել:

Բարձրացի վրաս, մըջմեջ վանական:

Ու կռնակը ծոցով Ռէս Մէլիքին դարցուց:

Աստուած իմ... հապա գո՛ւն... նկատել տուաւ Ռէս Մէլիք խղճուած ձայնով մը:

Մի՛ առարկեր... չուտ ըրէ՛... ժամանակ չը կորսնցունենք, ընդհանգ վանականը քիչ մը նեղացաւ:

Ռէս Մէլիք զոգրաւոր իր ոտքը դրաւ այդ պաշտելի մարդուն կռնակին վրայ ու մինչեւ ծակը բարձրացաւ: Ձեռքերը ճեղքուածքին քարերուն կառնելով սողոսկեց անոր մէջ եւ գուրս ելաւ: Շատ չանցաւ վանական ալ ճեղքուածքին մէջ երեւցաւ, ուսկից զոգնութեամբ մը պատին տա-

ինչպէս որ ներկայ վարչութիւնը մէկ երկու ամիս առաջ բաւական թուով գրքեր բերել տուած էր վանատիկի Միթարեան վանքէն. բայց այս անգամ կը սպասենք յարգելի վարչութիւնէն, որ գրքերու բնութեանը աւելի խնդրոյ առարկայ ընէ:

Ուրեմն գաղթականութեան թարգման հայ գիտնական, խորին շնորհակալութիւն կը յայտնեմ ներկայ վարչութիւնը կազմող յարգելի պարոններուն, որ իրենց ժրպէջան աշխատութեամբ, Ընթերցարանը քիչ ժամանակուան մէջ նախանձելի վիճակի մը հասուցին, որ յայտ օտարաց պատիւ կը բերէ զաղթականութեան:

Փոփոքիկ է որ ներկայ վարչութեան յարգոյ անդամները չը վնասին ուսանց յարուցանել փորձած խոշորաներու պատճառաւ, այլ շարունակեն իրենց գործունէութիւնը, որուն արդիւնքը իրենց անկեղծութեան եւ յառաջդիմասիրութեան երաշխիքը պիտի ըլլայ:

ԱՐԱ ՇԱՆՍԻՐ

ՂԱԶՈՒՆ, 8 Ապրիլ 1902  
(Պարսկաստան)

Նախորդ ամսոյ 27ին Պարսկաստանի Մուշաֆէրէթտին Շահը թէհրանից մօտ 1,500 ձիաորներով եւ ոչ պաշտօնապէս անցաւ այստեղից դէպի Ռաշտ, երկու օր մնալով մեզ մօտ. նա նորից իր կարօտած վայրերը այցելելու եւ կամ քաղաքական զանազան նպատակներ առաջացնելու կ'երթայ: Ընդունելութեան ձեռք ըստ արժանւոյն էր: Շահը քաղաքագործից ներս մտած պահուն, Ճանապարհային Ընկերութեան ռուս պաշտօնեաները իրենց տնօրէնին հետ, եւ Հայերը խմբովին իրենց վիճակաւոր վրթանէս քահանայի հետ կազմ եւ պատրաստ էին Շահին ընդունելու. լուսանկարչական գործիքները խորուած կային ժամանակին տեսարանի աչքի ընկնող նկարները արատապելու համար. սակայն, զփաղաքուր, նորին վեհափառութիւնը չուզէր խառն ամբօխին մէջ կանգ առնել. ուստի ուղղակի Արքայական գնացքը իջեւանեց

կը շեռտ եցաւ, որ բազմաթիւ ներքին խորութեանը, հազիւ մէկ մարդու հասակէն քիչ մը աւելի բարձր գիրք մը ունէր:

— Գալէ՛... քալէ՛... մըջմեջ վանականը:

Ու բանտին յետնակողէն, որ ծովուն վրայ կը նայի, ուղղակի քաղաքին շուրջը պատող պարիսպներուն քայքայուած տեղը հասան ու բերդին ամենէն ապահով ճամբէն Աւանց գնացին, որ վանայ գեղեցիկ ու օղաւէտ արուարձանն է: Բայց այդ արուարձանը չը մտան: Բաւական հեռուէն Հայկա-Վանք վերադարձան ու Լուսիային տունը ապաստանեցան:

## ԳԶԻՐ ԶԱՐԹ ԻՐ ԳԵՐԻՆ ՄԷՁ...

Ռէս Մէլիքին ձեռքակալութենէն ետք, Գիւր Զաքօ գեղին պաշտօնական մարդը դարձաւ ու անոր գործերը վարելու համարձակեցաւ, առարկելով որ կառավարութեան հրամանն էր այդ:

քաղաքիս դատաստանատան վիթխարի գրան առաջ, որի համար կը պատմուի թէ նատր-Շանի պալատին դռան է եղած: Շանը մայրաքաղաքից բերած ունէր իր հետ զինուորական երաժշտական խումբը, բայց որովհետեւ, նկատելով որ սուգի (մուհարբէմ) օրերն է, հետեւաբար՝ բնաւ ձայն ու մպտուռն չը լսուեց, կամ ի յարգանս սգալի աւուրց եւ կամ աւելի ճիշդը վասն անին ֆանատիկոս Մուշտէյիտներին եւ Սէյիդներին (կրօնապետք):

Թէհրանի թղթակցութիւններէց կը քաղենք հետեւեալը.

«Այստեղ քաղաքի բնակչութիւնը երկիւղի մէջ է, դուրս եկած են մի քանի մարդիկներ, որոնք ջրերի, շուկայի հացերին եւ քաղցրաւնիքներին մէջ թոյներ են խառնում, որից մօտ 17 Պարսիկներ մեռած են: Քաղաքապետը իսկոյն նոր ոստիկաններ աւելցնելով խիստ հսկողութեան առած է: Այնպէս կը լսենք թէ, ոճրագործներին երկուսը բռնուած են»:

Ի միջի այլոց քաղաքիս ազգային գործերը արգահատելի են, մէկ կողմէն բողոքաւոր է ժողովուրդը իր ունեցած քահանայի միջին չափով բնագոնակութեան եւ գործունէութեան համար:

Մենք Ղազուխի ազգային կեանքից շատ բաներ ունինք գրելու, բայց գոնէ այժմ կը քողարկենք երեսը, յաջորդ եւ մօտակայ պարագայի մը մէջ աւելի ստոյգ եւ հաւաստի կողմերով բանալու համար:

Ազգ. վարժարանի հոգաբարձուները գործէ քաջուած են, վախճալով թէ ուսուցչի առկիւր վճարելն իրենց գրպանի վրայ կը ծանրանայ. բայց անկեղծութիւնը պարտք կը դնէ մեր վրայ առելու որ նոյն վարչութեան գանձապետը, Սիմէօն իման Բարխուտարեանց, բոլոր ուժով դիմագրում է արգելքների դէմ, առանց մի ո՞ր եւ է դժգոհութիւն ցոյց տալու իր ստանձնած պաշտօնին հանդէպ. եւ այսպէսով երեւում է որ իր ընկերների մէջ վերջին յաղթութիւնը պէտք է տանի: Սեռունի

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տփղիսէ կը գրեն.

«Թիֆլիսում տեղեկութիւն է ստացուած, որ այս օրերս Ս. էջ-

իրմէն բողոքովին զգուած ու ձանձրացած գեղացիները թէեւ այս տեսակ բռնաբարում մը չուզեցին տանիլ, սակայն լաւ համոզուած ըլլալով Գլխի ինչ կարգի գազան մը լինելուն, վախճան բողոքելու, վախճան անոր դէմ ձայն բարձրացնելու... հետեւաբար թողութիւն որ այդ հիշելը, այդ անիծեալ մարդն իր ուզածն ընէ եւ իր անայգ դերին մէջ մտնէ...»

Գլխի մը երկու հիւրեր եկան իր տունը: Մին վարդապետ մըն էր, իսկ միւսը՝ քաղաքացի երիտասարդ մը:

Գլխի Ձաքօ տարօրինակ սէր մը ունէր գէպի կղերականութիւնը, այդ պատճառաւ կը յարգէր այդ պաշտօնին կոչողները:

Վարդապետին գալուստը մեծ ուրախութիւն մը եղաւ իրեն համար, որովհետեւ իր ինքնակոչ Ռէսուլթեան օրով ո՞չ մէկ կղերական իր տունը ոտք դրած էր, բացի գեղին նորընծայ Տէր կարապետ քահանայէն որ իր չարագործութեան, իր դաւերուն ու իր բոլոր նենգամիտ խարդախու-

միածնում վրէլ է վնասարանի մէջ վնէ. կաթողիկոսի նշարանը գլխի ժամանակ: Նորին Ս. Օծութիւնը, բարեբաղդաբար, ազատուել է անխուսափելի վտանգից եւ այն՝ բողոքովին պատահական կերպով այդ օրը նա Բիրականումն է եղել և գիշերել է այնտեղ»:

— Պուկարաց Ս. էջգարքի 25ամեայ Յոբելեանի հանդէսին ներկայ գտնուելու և հայ ազգին կողմէ Նորին Ամենապատուութիւնը չորհրդաւորութիւն համար, կրօն. ժողովոյ ատենապետ Տ. Գրիգորիս եպիսկոպոս, երկու վարդապետներու ընկերակցութեամբ, երեքսրբի օր Ֆէնէրի (Պոլիս) Պուկարաց եկեղեցին գալած են, որ օրուան հանդէսը տեղի ունեցած է:

— Պուկարահայոց նախկին Ալցիւն Հովիւ Տ. Բարթողիմէոս վարդապետ Պոլիս հասած ըլլալով, Պատրիարքարան ուղեւոր է, և անտարակոյս, այս կողմերու ազգային գործոց տեսուր կացութիւնը պարզած: Փափաքելի է որ վարդապետին բերանացի տուած տեղեկութիւնները քէշ մը ազդեցութիւն ընէին Պատրիարքարանի վրայ, որ փութացնէր ձեռնհաս Հովիւի մը առաքումը:

— Ճիպուկիէ 357 ֆրանք զըրկուած է Ալզգ. Պատրիարքարան, կարնոյ երկրաշարժէն վնասուող ազգայնոց ի նպաստ:

— Ս. էջմիածնայ միաբաններէն Տ. Մխիթար վարդապետի կողմէ մէկ տեղեկագիրը Ռուսիոյ հայութիւնը հետեւեալ թուանշաններով կը ներկայացնէ.

1,131,474 անձ, 6 վրձակ կամ թիւ, 1327 եկեղեցի, 79 վանք, 7 եպիսկոպոս, 34 վարդապետ, 1,547 քահանայ, 366 եկեղեցւոյ պաշտօնեայ, 4 բարձր թեմական վարժարան, 3 անկեղեցւոյ:

— Պոլսոյ լրագիրներէ կրիմանք թէ իլիսա էֆ. Չոյեան կիրակի օր մեռած է, Հանգուցեալը Պետական խորհրդոյ քաղաքական ճիւղին անդամ ըլլալով, իր կեանքին

մէջ 40 տարի Օսմ. պետութեան ծառայած է: Իր ազգային կեանքին մօտէն տեղեկ չըլլալով, միայն կը յիշենք թէ, ի միջի այլոց, նա քանի մը անգամ Քաղ. ժողովոյ անդամ ընտրուած ու պաշտօն վարած է:

— Տփղիսի մէջ թատերական ընկերութիւն մը կը վերակազմուի այս օրերս, «Հայոց Տրամատիքական ընկերութիւն» անունով, որուն կանոնադրութեան հետեւեալ տողերը կը պարզեն իր նպատակը.

«Ընկերութիւն հիմնուած է թիֆլիսում՝ նպատելու դրամատիքական արուեստի զարգացման իւր անդամների մէջ և կազմակերպելու մշտական ու պատահական ներկայացումներ թիֆլիս քաղաքում և նրա նահանգի միւս տեղերում: Այս նպատակին հասնելու համար ընկերութիւնն իրուումը ունի, ի միջի այլոց, հրատարակելու հայերէն ինքնուրոյն և թարգմանական դրամատիքական երկեր, մերցանակներ նշանակելու հայերէն լեզուով գրուած դրամատիքական ամենալաւ երկերու համար և բաւալու թատերական դասարաններ ու ժամանակաւոր դասընթացներ թիֆլիսում՝ դերասանների պատրաստութեան և զարգացման համար»:

## ԻՐԱՒՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Կ. Երզնկացեան, Գահիրէ. — Ստացանք ձեր զրկած 25 ֆրանքը: Ա. Բ. է ոչ նամակ եւ ոչ դրամ ստացած ենք տակալին. զգացուցէք իրեն թէ համբերութիւն ալ չափ մը ունի: Ապրիլ 20ին սկսեցինք թանկաթիւր զրկել:

Տ. Ա. Գ., Ղազուխ. — Սկսեցինք Թէհրանի նոր հասցէին զրկել թերթը: Պարսկաստանէ մեզ բաժնեգիրն զրկելու համար պէտք է նամակի մէջ ռուսական թղթադրամ գնել ու վալիօն տեղադրուի:

Տ. Խ. Թ., Սիւլիկ. — Պուրկազի խաբէութեան խնդրել ոչ թէ Տիար Ճգնաւորեան, այլ ուրիշներ դրած են մեզ մանրամասնաբար: Աւետիս Գրի-

Այս կիսկտուր խօսակցութիւններէն ետքը, վարդապետն ու երիտասարդը քննալու գացին:

Երկու օրի չափ Գլխիին տունը հիւր մնալով, վարդապետը գրեթէ ուսումնասիրելու յաջողած էր այդ մարդուն հոգեկան վիճակը, հետեւաբար գաղտնի եկեղեցիի խուցը տարաւ զանի եւ խոստովանեցնել ուղեց:

— Գիտէ՞ք, Ռէս Ձաքօ, ըսաւ վարդապետը կրօնականներու յառուկ շնչով մը, մեծ մարգեր, մեծ պաշտօններու վրայ եղողներ, մէկ խօսքով՝ կառավարութեան բոլոր գործերու մէջ մտնողներն ամենէն աւելի պէտք ունին ո՞չ միայն մարմնական վայելքներով ժամանակ անցունելու, այլ հոգեւոր պարտականութիւններն ալ յիշելու, զանոնք աչքին առջեւ ընկնելու եւ անոնց վրայ խորհելու: Այսօր կենդանի էք, ողջ էք... արեւը, աշխարհը, կեանքը ձերն է... բայց վստահ էք... ապահով էք թէ վաղը կենդանի կը մնաք, թէ այսօրուան արեւը՝ վաղը չպիտի միջնի, թէ

գորեան անուն կօշիլ-նեղող խեղճուկը իր խաբուելու բոլոր պարագաները շատ շատերու պատմելէ յետոյ, կերեւայ թէ սակարկութեան մը փոխարէն, այսօր բերանը փոխելով կուզէ իր մազձր թափել մարդու մը վրայ, որուն նետած մէկ եղունքը չարժեք ինք ոչ խելքով, ոչ մտքով եւ իր անցեալ ու ներկայով:

Բայց իրողութիւնը մէջտեղն է. դուք ալ մի խաբուէք. նախ մտածեցէք թէ՛ եթէ այդ բնական իրենքուն ձեռքը ծանօթ գաշնակցականի մը յանձնարարականը չըլլար, ինչպէս կրնային բռնապետական երկիր մը երթալով, հոն ուղղակի գոմիթէի անդամներուն ներկայանալ ու անոնց ծանօթանալ:

## ԾԱՌՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԴԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գնոյն աժանութեանը կը պարունակէ ազգային հին եւ նոր գրեթէ բոլոր երգերը: Գին 1 Ֆր.

ՆԵՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱԾԸ, Պուկարիոյ ազատութիւնէն առաջ Պուկար ժողովուրդին թուրքերէ կը բաժն տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շատ հետաքրքրական: Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ, Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Ղ. Նահապետեան:

Զեղչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է գիտել Իրաւունքի խմբագրութեան, բօսթի ծախքը 10ակն սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, եթէ ուրիշ գիւրութիւններ պակսին, կրնո՞ւն ինչ նամակագրոյմ 10 0/0 գեղջով:

## ԿԸ ՓՆՏՈՒԻ

Բաղէշ գաւառի Յորկոնք գիւղէն Պաղտասար անուն ազգայինը 6-7 տարիէ ի վեր անյայտացած ըլլալով, իր ազգականներէն կը փնտռուի: Յիշեալը 35 տարեկան, միջահասակ, թխադէմ եւ սեւահեր անձ մըն է. իր հասցէն գիտցող ազգայինք թող հաճին խմբագրութեանս իմացնել, որպէս զի մենք ալ անոր ընտանիքին հաղորդենք:

այսօրուան աշխարհքը՝ վաղը ցուրտ փոս մը չպիտի դառնայ, թէ, վերջապէս, այսօրուան ձեր երջանիք ու բաղդաւոր կեանքը՝ վաղը դիակ մը չպիտի ըլլայ... Անշուշտ վստահ չէ՞ք, այնպէ՞ս չէ: Ուրեմն, Աւետարանին ըսածին պէս, ամեն ժամանակ արթնուն մնանք, որպէս զի այս անցաւոր կեանքին խաղէն աչքերնիս բանալնուս պէս չզղջանք եւ յաւիտեանական դժոխքին մէջ չնետուինք: Ինչու որ մեր ձեռքն է արքայութիւնն ալ, դժոխքն ալ...:

Գլխի մտիկ կընէր. բայց իր կերպարանքը, հոգւոյն այս արտաքին պատկերացումը, ծովէն դուրս հանուած մարդկային դիակի մը գոյնն առած էր: Կուզէր խօսիլ... բայց կը խղճուէր իր բովանդակ ցնցումներու մէջ: Ուստի ապուշի մը պէս կը նայէր...:

(Շարունակելի)

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна